ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ *)

XIII

Ես այժմ գտնուում եմ Շվէյցարիայի գերմանական մասում, սիրելիս, և յատկապէս Բերնի կանտոնում, այն աննման, մշտածիծաղ, գալարագեղ վայրերում, որոնք ընդհանուր անունով կոչուում են՝ Oberlande Bernois: Ինչ անգամ է բնութիւնը աչխարհի որևէ ուրիշ անկիւնում այսքան հմայիչ գեղեցկութիւն թափել: Լեռները՝ ձիւնապատ կատարներով, կապուտակ ու սառնորակ լճերը, կաթնային ամպով պատած ժայռերի բարձրութիւնից գահավիժուող ջրվէժները, մշտականաչ անտառները ու մարգագետինները, բոլորը, բոլորը միասին՝ ասես խօսք մէկ արած՝ մի դիւթական, հմայարեալ ֆանտաստիկ պատկեր ստեղծելու համար այստեղ հանգիպել են իրար:

Սա արդէն բնութեան մի անհասկանալի չռայլութիւն է կամ գուցէ մի աքանչելի միտեր, որի առաջ պիտի ծունկ չոքել, եթէ անկարող ես լուծուել նրա լայնատարած, խորհրդաւոր ծոցում: Ինգֆրաուն, Եգերը և այլ բազմաթիւ կատարներ իրար, գրկող, իրար գալարուող կամ ձեռք ձեռքի տուած խելագարօրէն ընթացող լեռնաշղթաներ, Թուն, Բրիենց, Ուչինզէ, Կապոյտ և այլ մանր ու մեծ լճերը, լեռնային սառցադաշտեր, կանդեր և Ջիմըն սահանքաւոր գետերը, բոլորն այստեղ են, այս զարմանալի Օբերլանդում, ուր խենթ բնութիւնը հարբեցութեան մի վայրկենում ասես դուրս է թափել իր գեղեցկութեան գանձերը՝ առանց որևէ օրէնքի և տրամաբանութեան՝ գեղարուեստական մի սքանչելի անկարգութեամբ:

Ահա այստեղ եմ, սիրելիս, այս ապշեցուցիչ բնութեան

---

*) Տես «Մուրճ» № 9.

մէջ, և, ինչ որ խիստ տարօրինակ է, չարաթներ են անցնում, ես չեմ կարողանում հաչտուել իմ նոր կացութեան հետ, և... չափազանց տխուր եմ։ Թուում է, որ ես այստեղ մի բան պէտք է իմանամ և չեմ կարողանում իմանալ։ Հաւատացնում են, որ լայնարձակ ու խաղաղ բնութեան ծոցում մարդ հանգստանում է, մտքերը պարզւում են, և մի ախորժ մեղմութիւն համակում է մեր ամբողջ էութիւնը։ Ճշմարիտ է այդ արդեօք, չը գիտեմ, միայն այս լեռների ու անտառների մէջ՝ բնութիւնը կառավարող գաղտնիքին մարդ այնպէս մօտ է զգում իրան, որ ուզում է գրկուել նրա հետ. և որովհետև այդ այնուամենայնիւ անկարելի է, ճշմարտութեան ծարաւը մնում է անյագուրդ, անյոյս տխրութիւնն անհասկանալի, յարատև մելանխոլիան է բաժին մնում մենաւոր թափառականին։

Գիտեմ, այս տողերը կարդալիս երևի ինձ լաւ ծանօթ հին ժպիտը վերսին խաղում է շրթունքներիդ. դու ինձ միչտ համարել ես միամիտ, յոռետես, լալկան, բայց հաւատա, ընկեր, սա այն չէ, այսպիսի բնութեան մէջ մարդկային հոգին աղմկող բոլոր իրական յոյզերն և ցանկութիւնները ջնջւում են, մնում է միայն մի հաստիկ բուռն տենչ—խառնուել անդառնալի կերպով չուրջդ փոփոսացող գաղտնիքին, ագահ շրթունքներով ծծել նրա թագցրած ճշմարտութիւնը և ջնջուել՝ ինչպէս նիրվանայի մէջ՝ մոռացութեան ու ոչնչութեան ծոցում։ Բայց հնարաւոր է այդ... և տխրում ես ու մռայլւում, և արցունքն այնքան ա-խորժելի, այնքան սփոփիչ է գառնում։ Բնութեան այսքան հըմայքի, այսքան գեղեցկութեան առաջ լաւագոյն վայելքը անխառն ու քաղցր լացն է միայն։ Անզօրութեան լացն է այդ, համաձայն եմ, բայց օրքան գուրեկան։

Աչխատել չի լինում, անգամ այս խոհերը գրի առնելու ցանկութիւն չը կայ։ Մարդ այստեղ թափառում է՝ առանց կանխորոշ ծրագրի. քայլում է՝ ուր պատահում է և մտածում է անվերջ։ Կարճ, անհասկանալի կեանքի ժամերը ընթանում են յոգնեցուցիչ դանդաղութեամբ։ Է՜հ, սիրելիս, մեր գոյութիւնը մի չար հեգնութիւն է բնութեան, երբ մարդն այնքան չնչին տեղ է բռնում այս զարմանալի տիեզերքի մէջ։ Անթիւ սերունդներ գալիս են ու անցնում, իսկ այդ Իւնգֆրաուէն իր տեղումն է. միայն այս փաստը բաւական չէ, որ հարիւրաւոր «ինչո՞ւներ» պաչարեն մարդի գլուխը և գիահներ բզկտող սև ագռաւների պէս քրքրեն նրա ուղեղը։

Սակայն քեզ խոստացել եմ դրել չվեյցարական գիւղի մասին, ուստի փորձեմ թողնել լեռներն ու ձորերը, մոռնամ մարդկային բնակութիւնները։ Դիտելու, գրելու չատ բան կայ։

Գիւղը, ուր ես ապրում եմ, Վիմիս է կոչւում, Զիմզն գետի ափին և Նիզըն անտառապատ լերան ստորոտում։ Բաւական մեծ գիւղ է, մօտ 30—40 տնով, մի կողմից առասլը փըռւում են հարթ մարգագետիններ, իսկ միւս կողմից երեք լեռներ իրար կողքի շարուած՝ նայում են իրանց ոտների տակ փռուած բնակութիւններին, որպէս պահապան առիւծներ։ Շվեյցարական գիւղը իրապէս ճանաչելու և նրա կեանքով ապրելու համար պէտք է խոյս տալ բազմաթիւ մեծ ու փոքր հիւրանոցներից, որոնցով ծածկուած են այս երկրի լեռներն ու ձորերը, և տեղաւորուել մի որևէ գիւղացու տան մէջ, նրա ընտանիքի հետ։

Այդ չատ հեշտ է. շվեյցարացին օտարներից փախչող չէ և բնութիւնից երեխայի պէս վստահող անձանձրոյթ մարդուն։ Հաւատը դէպի մարդկային չիտակութիւնն ու աղնուութիւնը սրբանց մէջ խիստ զարգացած է։ Իմ տանտէրը, պարոն Իլգ, շվեյցարացու իսկական տիպար է թէ՛ արտաքինով և թէ՛ իր բնաւորութեամբ։ Կարճահասակ, լիքը մարմնով, կլոր դէմքով, կապտաչեայ ու չիկահեր, մշտածիծաղ ու բարեմիտ պ. Իլգը մի վերին աստիճանի ախորժելի անձնաւորութիւն է. իսկ իր կինը—madame Ilg; ըստ ամենայնի սիրուն զոյգ է կազմում ամուսնու հետ։ Չորս երեխայ ունին (մէկ տըղայ երեք աղջիկ), որոնցից մեծը հօթ տարեկան է, իսկ փոքրը մի տարեկան, խելացի, բարեկիրթ մանուկներ, որոնք ինձ այնքան զբաղեցնում են իմ բազմաթիւ տխուր ժամերին։ Որպէսզի այս ամբողջ ընտանիքի նկարագիրը լրացնեմ, յիշեմ նաև պարոն Ilg-ի հօրը, grand papa-ին, ինչպէս անուանում են նրան բոլոր տանեցիք։ Քաջառողջ մի ծերունի՝ հօթանասունից անց, որ առաւօտից երեկոյ աշխատում է պարտիզում, որի յետևից չարունակ քաշ են գալիս երեխաները՝ խնձոր կամ տանձ ստանալու յուսով։

Այս ընտանիքի խնամքն ու հոգածութիւնն ինձ համար, ճշմարիտ, զարմանալի է և իմ բոլոր սպասածից անցնում է։ Պ. Իլգ և իր կինը առաւօտից երեկոյ զանազան միջոցների են դիմում, որ ես լաւ ամենայնի գոհ և ուրախ լինիմ։ Իմ սեղանը միշտ ծածկուած է բազմատեսակ ծաղիկների փնջերով, սենեակումս իշխում է օրինակելի մաքրութիւն, որ ուշադիր տանտիկնոջ խնամոտ ձեռքերի արդիւնք է։ Նա, այդ ջահել և մի փոքր քնքոյշ կազմուածքով կինն աշխատում է առաւօտից երեկոյ. չորս երեխաները միշտ մաքուր ու խնամքով հագնուած են, նա պատրաստում է նաև ընտանիքի կերակուրը, անում է բոլորի լուացքը, հագում է ամենից համար և դեռ ժամանակ է գտնում

կարդալու։ Եւ դեռ այս չէ բոլորը. պարոն Իլգը խմբագիր-հրատարակիչ է Վիմիսի գիւղական թերթի, ինքն է գրում բոլորը, իսկ կինը տպագրում է. բայց այդ մասին յետոյ, երբ ես քեզ կը գրեմ գիւղական լրագրի մասին։

Դեռ առաջին օրուանից պ. Իլգը՝ երևի ինձ զբաղեցնելու սիրալիր մտադրութեամբ՝ իր ծառայութիւններն առաջարկեց ինձ գիւղի հետ ծանօթանալու համար։ Տօն օր է. գիւղին մօտիկ անտառից լսւում է երաժշտութեան ձայն։ Տանտէրս ինձ բացատրում է, որ գիւղը զուարճանում է այնտեղ։

—Գիւղական ուրախութիւն է, պարոն, չը գիտեմ, ձեզ կը հետաքրքրի։ Եթէ կամենաք, կարող ենք գնալ միասին։

Բարի, սիրալիր մարդ, իհարկէ կը հետաքրքրի։

Գնում ենք։

Գիւղը մի հատ գլխաւոր փողոց ունի մի քանի աննշան ճիւղաւորութիւններով աջ ու ձախ։ Մեծաւ մասամբ փայտեայ երկյարկանի մաքուր շինութիւններ են, կան նաև քարէ չէնքեր։ Այս գիւղի ընդհանուր պատկերը համարեա նոյնն է, ինչ որ Ֆրանսիական մասում, որ ես նկարագրել եմ արդէն։ Այստեղ էլ նոյն մաքրութիւնն ամեն կողմ, նոյն վճիտ յորդառատ ջրով աւազանները իւրաքանչիւր դրան առաջ, նոյն պարտէզներն ու ծաղկանոցները, միայն այստեղ աչքի է ընկնում պատչամբների բազմութիւնը։ Իւրաքանչիւր տուն անպատճառ իր սիրուն պատչամբն ունի՝ ծաղիկների և մշտականաչ բաղէների մէջ կորած։

Փողոցները լի են մեծ ու փոքր երեխաներով. նրանք հատ-հատ, զոյգ-զոյգ չտապում են դէպի անտառը, որտեղից լսւում է երաժշտութիւնը։ Հասակաւորների առաջից անցնելիս այդ փոքրիկները երբէք չեն մոռանում իրանց մեղմաձայն gruss-ը—ողջոյնը։ Նրանք մենակ չեն. այդպէս մեր նահապետական գիւղերի պէս այստեղ ոչ ոք միւսի առաջից չի անցնում առանց բարևի, առանց իրանց անխուսափելի gruss-ի։

Շվէյցարական գիւղն ուրախութեան մէջ է։ Անտառի մէջ մի փոքրիկ կանաչազարդ հրապարակ ներկայացնում է ակնապարար տեսարան։ Մի կողմում բարձրանում է տախտակեայ ժամանակաւոր էստրադա՝ ոստերով ու ծաղիկներով զարդարուած։ Այնտեղ՝ այն բարձրութեան վրայ տեղ է բռնել գիւղացիներից կազմուած երաժշտական խումբը։ Այս բանը թող քեզ չը զարմացնի, սիրելիս, Շվէյցարիայում գիւղ չը կայ, որ իր երաժիշտների խումբը չ'ունենայ։

Կանաչ հրապարակի վրայ խռնուած է հարիւրաւոր բազմութիւն ծանօթական չորերով. պարզ. գեղջուկ, խայտաբղետ չո-

բեր։ Այստեղ են ամենքը, ծերեր ու տղամարդիկ, կանայք ու ջահիլ աղջիկներ, փոքր երեխաներ։ Երաժշտութիւնը նուագում է ուրախ եղանակներ, ջահիլները՝ երիտասարդներ և մանկամարդ աղջիկներ՝ զոյգ են կազմած՝ տարուում են կանաչազարդ հրապարակում, պարում են այն երջանիկ անհոգութեամբ, որ յատուկ է պարզ և ցուցամոլութեան անսովոր գիւղին։ Հանդիսատեսները պարապ չեն, նրանք էլ կատակներ են անում՝ չրքխկացնելով փրփրուն գարեջրի բաժակները։ Պարում են նաև մանուկները։ Աստառը կրկնում է այս աղմուկի, ծիծաղի, երաժշտութեան արձագանգները, որոնք խառնուում են Ջիմբն գետի սրընթաց ալիքների անվերջ մռմռոցին։ Ընդհանուր այս ուրախութիւնն ինքնաբուխ է, յորդառատ գուրս է թափւում, ինչպէս վարարած գետ։ Բռնադատութիւն կամ ձևացումն չը կայ. մարդիկ ուրախանում են, որովհետև հոգիներում միչտ չը կայ, սրտերը լի են ցնծութեամբ, որ արտայայտուելու պէտք ունի։

Երևի կը զարմանաս, եթէ ասեմ, որ այս ահագին բազմութեան մէջ, ուր գարեջուրը բաւական առատ է, ես հարբած մարդ չը տեսայ. տաքայածներ, կամ ինչպէս մեզանում կ'ասեն՝ «քէֆը լաւ» մարդիկ կան, բայց մեր կողմի հասկացողութեամբ «քէֆով» մարդ ոչ մի հատ։

Բանն այն է, սիրելիս, որ այստեղ ուրախանալու համար կանխաւ հարբելու կարիք չը կայ. ուրախութիւնն, ինչպէս ասացի, օրանց հոգիների մէջ է. այս մարդիկ չ'ունեն սուր, կիզիչ ցաւեր, որ պէտք զգան գինիով խեղդելու, երջանիկ մոռացութեան մի քանի վայրկեաններ վայելելու համար, ինչպէս մեզանում։ Եւ յետոյ, որչափ ես կարողացայ դիտել մինչև այժմ, հարբեցող մարդու տեսքը այստեղ չատ աւելի նողկանք է առաջացնում, քան թէ մեզանում։ Ոտների վրայ կանգնելու անկարող և փողոցներում ոռնացող ու մռմռալով սողացող հարբած թշուառականը մեզանում զարթեցնում է ժպիտ, գառնում է «թամաշայի» մի կենդանի։ Այդպիսի դէպքն այս երկրում ցաւակցութեան և ամօթի զգայմունք միայն կը յարուցանէր։

Շվէյցարական գիւղացին չափազանց զգաստ է, ժուժկալ և տնտես. նա ոչ այն մեղկ անշարժութիւնն ունի, որ յատուկ է արևելքին, և ոչ էլ այն զուարճութեան յարկարծական, անհաչիւ, անտրամաբան բռնկումները, որ մեր երկրի մարդը սիրում է համարել կեանքի անհրաժեշտ գժութիւններ և իր ան գոյութեան մէջ փայլող երջանկութեան վայրկեաններ։

Ուշադրութեան արժանի մի հանգամանք է, որ այսպիսի պարերն ու զուարճութիւնները միչտ կապուած չեն լինում այս կամ այն ազգային-պատմական խոչոր անցքի տարեդարձի հետ,

այլ չատ յաճախ կազմակերպուած են մանաւանդ դիւղերում, հէնց այնպէս, «pour amuser la jeunesse»—«ջահիլներին ուրախացնելու համար», ինչպէս իրանք ասում են:

Գիւղերում, ինչպէս և քաղաքներում, բազմաթիւ ընկերութիւններ կան սպորտի կամ այլ նպատակով: Սոյն այս ընկերութիւններից մէկն ու մէկը կազմակերպում է կիւրակէ օրերում հանդէսներ: Դրա համար չատ բան հարկաւոր չէ, միայն լաւ եղանակ: Անտառը մօտ է, ընութիւնը՝ գեղեցիկ, տախտակից նատարաններ չինելը ժամի գործ է, իսկ պարելու, զուարճանալու տրամադրութիւնը միշտ կայ, բաւական է, որ ուխտատանքից դուրս ժամանակ գտնեն: Եւ գտնում են կիւրակէ օրերում, երբ ամեն մի պարապմունք դադարում է:

Եւ այս եղանակներն ու պարերը... միանգամայն տարբեր մերիններից, առհասարակ արևելքի պարերից և եղանակներից: Երաժշտութիւնը կենդանի, եռանդուն չէշտ ունի, իսկ երբ պլլուած զոյգերը տարուում են թափով, արագութեամբ: Այստեղ ամբողջ պարը կենսարտնացած է համարեա միայն ոտների եռանդուն չարժումների մէջ, իրանը մնում է ուղիղ, առանց ծռմռուելու, առանց դալարուելու: Այս երաժշտութիւնն ու պարերը ընդհանուր երոպական կամ աւելի ճիշտ՝ արևմտեան են, բայց բուն չվէյցարական ժողովուրդն իր սեպհական երգերն, իր խաղ ու պարն ունի, նոյնպէս կենդանի, նոյնպէս ուրախ: Որչափ ես կարողացայ նկատել, սրանց երգերում երբեք չի լսուում յաւի չէշտ. եթէ մի փոքր տխուր եղանակ լսես, այդ էլ անպատճառ սիրային արկածի է նուիրուած: Ընդհանուրի առաջադրութեան, արդունքին նուիրուած երգ չը կայ, որովհետև դրա համար հարկաւոր է արևելցու ճակատագրին ունենալ, որին սրանք անծանօթ են իրանց բաղդից:

Դու նկատել ես, սիրելիս, որ մեր գիւղերում ու առհասարակ արևելքում անգամ խաղ ու պարին յատկացուած եղանակները լալկան են, յաւտա ու դանդաղ: Շատ անգամ հարատևութեան առթիւ նուագուած երաժշտութիւնը կարելի է թաղման ծառայեցնել առանց վերաւորելու սգի զգացմունքը: Մեր այն երկար «գևոնդերը» ծխոտ մրոտ խրճիթների կիսախաւարի մէջ, հեղձուցիչ օդում, մարմինների այն միակերպ, դանդաղ ևրերումները համարեա միևնոյն տեղում, այն մարած աչքերը, ուր հեռանդի, կեանքի նշոյլ չը կայ, այս բոլորը չեն կրում իրանց վրայ մեր ամբողջ կեանքի կնիքը: Թւում է, թէ մարգիկ չեն զուարճանում, այլ կատարում են մի անհաճոյ պարտք, որից ազատուել չեն կարող: Եւ գևոնդի մէջ, յատակի վրայ փռուած բազմութիւնը մակաղած հօտի պէս, որը պառկած, որը

թեք ընկած, որը նստած՝ նիրհելիս, իրար վրայ, իրար կողքի, մէջք-մէջքի, թև-թևի յենուած և ամենքը մեղկ, յոգնած, թուլամորթ ու ձանձրալի։ Աւելացրու սրա վրայ նաև մեր անտանելի գալ ու գնացման իրանց խլացուցիչ, վայրենի որոտով ու պղտոցով։ Նրանց չուրջը քանի մի հարբած, կարմրած դէմքեր, ծամածռութիւններ, անճոռնի ճիչեր, և պատկերը կատարեալ կը դառնայ։ Ահա թէ ինչն է մեզանում կոչւում հարսանիք, զուարճութիւն։

Խեղճ, խաւար ժողովուրդ։ Պարերն ու եղանակները այս կամ այն ժողովրդի կապրիզի, վայրկենական, ժամանակաւոր տրամադրութեան արդիւնք չեն։ Աչխարհագրական, կլիմայական, քաղաքական պայմանները դարերի ընթացքում որոշ ձևով մչակում են մարդկային հոգին, նրա բնաւորութիւնը, որ արտայայտւում է իր եղանակների և իր բոլոր չարժումների մէջ։ Արևելքն ու արևմուտքը տարբեր երկնքի տակ, տարբեր պայմաններ ունեցան։ Հնուց է այդպէս, և այժմ էլ մեկ տեղ խընդում են, միւս տեղ արտասուում։

Գիւղից բարձր, մի լերան սորոտում երևում է մի դղեակ, որ իր սուր, գոթական աչտարակով գրկում է չրջապատի հինաւուրց կաղնիների հետ։ Շատ հեռուից այդ չէնքը իր պատեբի միապաղաղ սպիտակութեամբ փայլում է համատարած կանաչ ֆոնի վրայ։ Նրա կատարից հնչող մեծ ժամացոյցը գիշեր թէ ցերեկ ասում է գիւղացիներին քառորդները, կէս-ժամերը և ժամերը։ Դաչտում, ձորերում աչխատող մարդը, լեռներում գիչերները իր կովերի ու այծերի հետ անցնող հովիւը, ուչացած ճամբորդը, անկողնում անքուն մնացող հիւանդը, չնորհիւ աչտարակից լսուող այդ բարձրաձայն ղօղանջի միչտ գիտեն, թէ ցերեկուայ կամ գիչերուայ որ ժամն է, և իւրաքանչիւր ժամի որ քառորդն է։

Շվէյցարիայում գիւղ չը կայ որքան և փոքր լինի նա, որ իր գիւղական խոչոր ժամացոյցը չ'ունենայ կամ զլորոցի, կամ եկեղեցու կամ որևէ հինաւուրց դղեակի վրայ։ Եւ այդ ժամացոյցները նոր չեն, սիրելիս, դրանցից չատերը մի քանի տասնեակ տարիներ, նոյնիսկ դար են տեսել։ Նրանք այնպիսի անհրաժեչտութիւն են դարձել չվէյցարական գիւղի համար, ինչպէս եկեղեցիների զանգակները մեր գիւղերի համար։ Շվէյցարիայի ժողովրդական բանաստեղծութեան մէջ գիւղական ժամացոյցը աստեղազարդ գիչերուայ, զունատ լուսնի, մեղմիկ հովերի չափ տեղ է բռնել։

կարծում եմ սխալ չի լինի համեմատութիւնս, եթէ ասեմ, որ մեր երկրում աքաղաղն է հեռաւոր ձեով կատարում այս ժամացոյցի պաշտօնը։ Յիշիր, թէ մեր հէքիաթների, մեր առօրեայ յարաբերութիւնների, մեր ըղձյցների մէջ որքան խոշոր տեղ է բռնում աքաղաղի կանչը։ Ամանդական այդ թռչունի ձայնը սև խաւարում ձիւների մէջ մոլորուած ճամբորդին ցոյց է տալիս գիւղի տեղը, անքուն հիւանդը այդ ձայնից է սպասում մի փոքր թեթևութիւն, որ լուսաբացի հետ պիտի գայ, աշխատաւորները նրանով են ոտքի ելնում, քահանան իր ժամն է յիշում, պառաւները իրանց ազօթքը։ Ես սիրում եմ աքաղաղի կանչը ձմերային գիշերներին, սիրում եմ, երբ միապաղաղ, խաւար հեռաւորութեան մէջ նիրհող գիւղի վրայ հնչում են նրա ելևէջները՝ անգիտակցաբար հաղարաւոր յողնած հոգիներին յիշեցնելով իրանց ծանր ճակատագիրը, սիրում եմ այդ բոլորը, որովհետև բանաստեղծական է, երազների նման սիրուն։ Բայց, սիրելիս, կեանքը իր բիրտ իրականութեամբ միայն բանաստեղծութեանը չի պատկանում։ Աբեղների կարաւանները նոյնպէս բանաստեղծական են իրանց գիշերային չուերով, իրանց բացօդեայ դադարներով, բայց նրանք տեղ են տալիս երկաթուղու առաջ, և նրանց բոժոժների ձայները խեղդւում են չորս օրուայ տակ։ Հաւատանք, որ մեր գիւղերն էլ մի օր կ՚ունենան աչտարակների կամ զանգակատների կատարներից հնչող իրանց ժամացոյցները, իսկ առայժմ սխալ է ասել, որ ինչքան հեռու է աքաղաղը ժամացոյցից, նոյնքան հեռու են մեր գիւղերը չվէյցարական գիւղերից։

Տանտէրս ասում է, թէ «գիւղի վրայ իշխող այն ամենակ չէնքը հինաւուրց դղեակ է, որ մի ժամանակ պատկանում էր՝ մեր երկիրը, մեր գիւղերը տիրող կալուածական իշխաններին»։

—Այժմ մենք այլևս ոչ կալուածատէր ունենք, ոչ աղնուականներ, ոչ իշխողներ, չարունակում է նա ժպտալով, մենք ենք մեր գլխի, մեր բազկի, մեր աշխատանքի, քրտինքի տէրը, ինչպէս ամեն բան, այդ հինաւուրց դղեակն էլ մեզ է պատկանում։ Արդարութիւնն էլ այդ է պահանջում, այնպէս չէ՞, պարոն, այդ դղեակը անուշտ չինուած է մեր պապերի աշխատանքով, նրանց դառն քրտինքով. այժմ տառապած հայրերի զաւակները իրաւունք ունեն ժառանգել այն և վայելել։ Մենք այնտեղ տեղաւորել ենք մեր դաստարանը, մեր դպրոցը և գիւղական բանտը։

—Մի փոքր տարօրինակ համադրութիւն այդ իրարից տարբեր հաստատութիւնների։

—Իրաւունք ունիք, բայց դաստարանը գտնւում է դպրոցի

և բանաի մէջ, դա մի կամուրջ է, որով բարեբաղդաբար մենք անցողներ չաա չ'ունինք, և այդ թիւն էլ տարէց-տարի նուազում է։

Մենք գնում ենք այցելելու այդ դղեակը։ Այդ չէնքը նըկարագրելու ցանկութիւն չ'ունիմ. որպէս բազմութեան վրայ իշխող, նրանց քրտինքը չահագործող, բայց իր կաչւի համար չարունակ դողացող մարդկանց բնակարան, դղեակներն ամեն տեղ նոյնն են։ Նոր ժամանակներն ու պայմանները նոր փոփոխութիւններ են կատարել դղեակում. օդն ու լոյսը չատացել են մինչև այն աստիճան, որ կարելի է եղել այնտեղ տեղաւորել անգամ չվէյցարական գպրոցը։ Ինձ առանձնապէս հետաքրքրողը այս անգամ գիւղական բանտն է, որ գտնւում է դղեակի ամենաբարձր մասում հէնց առաստաղի տակ։ Բարձրանում ենք այնտեղ։

—Մենք մեր բանտարկեալներին երկինք ենք հանում, ասում է առաջնորդս ծիծաղելով, որպէսզի Աստծուց վախենան, եթէ մարդկանցից չեն ամաչում։

—Բայց դուք պէտք է որ չատ բանտարկեալ չ'ունենաք։

—Օ՛, չատ քիչ, գուցէ և այժմ այնտեղ ոչ ոք չը լինի։

Եւ այնտեղ ոչ ոք չը կայ։

Հէնց առաստաղի տակ իրար կողքի չարուած են 5—6 խցեր բաւական ընդարձակ, որոնց վրաերիկ, երկաթապատ լուսամուտները նայում են դէպի անտառապատ լեռները ու կանաչ բլուրները։ Տեսարանն այստեղ չատ սիրուն է. իւրաքանչիւր բանտասենեակում դրուած է մի փայտէ մահճակալ՝ սպիտակ կտաւէ անկողնով, որ ծածկուած է բրդէ վերմակով։ Լուսամուտի մօտ մի փոքրիկ սեղան, մի աթոռ, գրելու յարմարութիւններ, իսկ պատի վրայ՝ մի դարեկում, փոքրիկ դրադարան՝ բանտարկեալի ընթերցանութեան համար։

Եւ այսպէս չվէյցարացի բանտարկեալը անարդ, անասնական վիճակի չի վերածւում։ Նա ունի օդ, լոյս, տեսարան և իր ժամերն սպանելու համար օգտակար գրքեր։ Հասարակութիւնն այստեղ էլ իր վնասակար անդամից պաշտպանւում է՝ նրան առանձնացնելով, նրան անզօր դարձնելով, որովհետև տակաւին մարդկութիւնը չը կարողացաւ այդ միջոցից դուրս մի ուրիշը մտածել, որ լինէր պակաս վիրաւորական և աւելի օգտակար դժբաղդ յանցագործի և պատժող հասարակութեան համար միաժամանակ։ Ուշագրաւը սակայն այն է, որ այստեղ՝ Շվէյցարիայում, ինչպէս այդ երևում է բանտերի տարբերակից, դէպի յանցագործը իր ունեցած վերաբերմունքի մէջ քնաւ չի առաջնորդւում վրէժխնդրութեան զգացմունքով։ Նա առանձ-

նայնուամ է վերաբակար անհատին, բայց չի անարդում, զսպում է նրան, բայց չի տանջում, չի չարչարում, հաւատացած լինելով, որ իւրաքանչիւր մարդ ինչքան և մեծ լինի նրա գործած յանցանքը, կարող է իր հոգու խորքում մի թաղնուած, բարոյական կայծ ունենալ, որը ներելմն լաւ պայմաններին, լաւ վերաբերմունքի շնորհիւ հնարաւոր կը դարձնի մի ամբողջ վերածընութիւն։

Վերջին ժամանակները, սերելիս, առհասարակ բարոյական և հասարակական խնդիրներում չատ է խօսւում ժառանգականութեան տակաւին մութ մնացած օրէնքների, տատւիզմի մասին։ Անշուշտ իւրաքանչիւր ներկայ խոր արմատներով խրուած է հնագոյն անցեալի մէջ, և օրգանական ու անօրգանիկ կեանքի բազմաթիւ արտայայտութիւններն արդիւնք են անթիւ դարերի ընթացքում իրար յաջորդող պայմանների։ Մարգկային գործողութիւններն ևս, լաւ թէ վատ, անշուշտ ենթարկուում են նոյն ընդհանուր օրէնքին, նոյն ձևով կապուած են մի մութ անցեալի հետ։ Իւրաքանչիւր հոգի բազմաթիւ քնած, ծածուկ ոյժերի մի չտեմարան է։ Շոպենհաուեր իրաւունք ունի՝ ասելով որ մարդ ինքն էլ չը գիտէ, թէ ինչ է թաղնուած, ինչքի ընդունակ իր կամքը, իր հոգին։ Հասարակութիւնն իր վերաբերմունքով դէպի անհատ դործ ունի այդ մութ, խաւար ոյժերի հետ, լաւ թէ վատ, նա նրանց զարգացնում է կամ չէզոքացնում, փոխարկնում կամ յետագծում, զօրացնում կամ թուլացնում է նրանց արտայայտութիւնները։ Իւրաքանչիւր յանցանք գուցէ չատ աւելի չարժաւորներ, ազդակներ ունի անհատից դուրս, քան անհատի մէջ։ Սրա թէ ինչու բանտային դժոխային պայմանները, անօգուտ տանջանքների սիստեմը յանցանքների խոշոր աղբիւր են հանդիսանում։

Վերաւորուած, արորուած մարդկային հոգ դուրս է գալիս բանտից, ինչպէս մի վրէժխնդիր ոդի, որ հաչիւ է պահանջում հասարակութիւնից իր կրածների համար։ Անարդար, անօգուտ տեղը տանջուած մարդը ամէն վայրկեան կաթիլ-կաթիլ թոյն է կուտակում իր սրտում, և եթէ ունի իր հոգում քնած, կորցրած աւերակ ոյժեր, նրանք զարթնում են բուռն կերպով և բարոյական աւերածի գործը կատարեալ դարձնում։

Մեր նմանների տանջանքին սիրահար բիրտ գլուխները իրանց վայրագութեան առաջացրած նողկանքը մեղմելու համար՝ սովորաբար յենուում են տգէտ ու խեղճ մարդկանց անդիտակցութեան, անզգայութեան վրայ։

Նրանք գտնում են, թէ ուրիշ կերպ անկարելի է վարուել *անկիրթ, կոպիտ* արարածների հետ։ Նախ և առաջ բիրտու-

թեան ու կոպտութեան ապացոյցը տանջանքներ կրելը չէ բնաւ, այլ պատճառելը։ Ում ձեռքը բարձրանում է մի խեղճ, խաւար արարածի վրայ, նա ոչնչով բարձր չէ իր զոհից։

Եւ յիսոյ ով ապացուցեց, որ օրինակ՝ մի թիկունքմիանգամայն տգէտ, մի անդրադէտ գիւղացի, մի բանուոր անզգայ է դէպի իր կրած անարգանքը, զուրկ է իր մարդկային արժանապատուութեան որևէ գիտակցութիւնից։ Իր անզօրութեան մէջ սովորաբար լուռ են այդ ողբերգելիները, բայց այրւում, փոթթուում են ներսից ամեն անգամ, երբ նրանց անարգում, ստորացնում են, երբ նրանց չարքաշ թիկունքին բիրտ բռունցքներով հարուածներ են տեղում։ Նկատել ես, սիրելիս, թէ ինչպէս մեր գիւղացիները բանտ տարուելիս աչքատում են խոտոր ճանապարհներով գնալ՝ հարևանների, ծանօթների աչքին չերևալու համար, թէ նրանք ինչ միջոցների են դիմում՝ հրապարակով բազմութեան առաջ չը ձնծուելու համար։

Ծեծը և մեր գիւղական բանտերը։ Ցիչում ես մեր գիւղի հրապարակը, ուր մի քանի խանութներ կան չէն կամ աւեր, փակ կամ մի ողորմելի առևտուրի յատկացրած։ Ութսն այնտեղ է նստում, այդ խանութների առաջ, իշխաններն էլ են այդտեղ։ Դա գիւղի խորհրդարանն է և դատարանը։ Հարկերն այնտեղ են հաւաքում, խորհրդածութիւնները ու վճիռները այնտեղ կատարում։ Եւ ծեծում են, անողորմ, անպիտակից ծեծ, ապտակով, մարակով, ժանակով, ճիպոտով։ Հայհոյանք, արիւն, աղաղակ, ոռնոց և ապա բանտ, այսինքն այն խոնաւ, խարխլած խանութներից մէկը, հողերի, մինների, կարիճների և կնգռի մէջ։ Ցիչում ես, որ մեր, երևիանեցիս՝ զուարճութիւններից մէկն էր գալ կանգնել այդ «բանտի» առաջ, պատի ճեղքերից նայել ներսում կծկուած մարդին, կամ փոքրիկ խճեր նետել նեղլիկ լուսամուտից ներս։

Ես երբէք մոռանալ չեմ կարող մեր գիւղում կատարուած «արդարադատութեան» մի դէպք։ Զոհը մի պառաւ քրդուհի էր։ Նրան բռնել էին մի այգում խաղող գողանալիս։ Ի՞նչքան պիտի գողանար խղճալին, երևի մի քանի ողկոյզ։ Բայց բռնել էին ու բերել գիւղաւէրջ և կապել մի խանութի պատշգամբի սիւնից։ Զորս կողմից հաւաքում էին նայելու այս գողին։ Նա տեսնում էր իր չոբրջը զայրոյթով լի աչքեր, սղմուած բռունցքներ, կրճտացող ատամներ, և վախից կպել էր սեանը։ Մտածում էին, ինչպէս պատժեն այս գող պառաւին, որ օրինակ դառնայ ուրիշներին։ Յանկարծ վրայ հասաւ ձերունի Փանոն, նայեց կապուած կնոջը, լաց եղերութիւնը և բացագանչեց.

—Էլ ինչու էք կանգնել, թակեցէք այս անպիտան պա-

ռաւին. ինչքան գող ու աւազակ կայ, սրանից են ծնուել, թա-
կեցէք, տուէք...

Եւ թակեցին...

Արեւելքի արդարադատութիւնն է այս: Իրանք թակողները
քանի-քանի անգամ են թակուել: Բոլոր սրագիպիաններից, բո-
լոր սովորութիւններից ամենաառատաձեւելին փոխադարձ բըռ-
նութեան սրագիպիան է, որ այնպէս ծանրանում է մեր ժողո-
վրդի վրայ: Մարդիկ ծնւում են, չը գիտեն ինչու, և ծնւում
են՝ նոյնպէս չիմանալով ինչու համար: Լաւ, արտու ոչխար նա է,
որի ճիպոտը խաղում է անդադար սրա նրա գլխի վրայ, որ
գիտէ պինդ հայհոյել և լաւ թակել: Սովորութիւն է այդ, պա-
պերից է եկել հասել, կարծես թէ առանց ծնւի այդ ողորմելի-
ների կեանքը կանգ կ'առնի, ապրել չեն կարողանայ: Ծնւում
են մնձերը, ծնւում են փոքրերը, գիւղի հրապարակը դաս-
տիարակում է նորանոր սերունդներ՝ ծնելու և ծնւելու հա-
մար:

Այսպիսի բարքերը չվէյցարական գիւղացու համար նոյնքան
տարօրինակ, նոյնքան դաղանային են, որքան մեզ համար
աֆրիկական վայրենիների մարդակերութիւնը: Հաւատացնել չի
լինում սրանց, որ մեր գիւղում մարդկանց թակում են անա-
սունների պէս: Եւ ինչպէս հաւատան խեղճերը, երբ իրանց
ձիերին ու կովերին էլ թակել չի կարելի, երբ ոչ մի չուն ան-
գամ լեայտի հարուած չի ստանում, ուր մնաց թէ մարդիկ:
Այստեղ չը կայ մի բառունչք, որ համարձակուի բարձրանալ,
ինչպէս և չը կայ մի հատիկ մէջք, որ կռանալ չանձն առնի
այն ընդունելու համար:

Ուշադրութեան արժանի մի հանդամանք ևս. չվէյցարացու
մէջքը չի կռանում նաև բևռ կրելու համար: Ծանրութիւնները
սրանք քաշում են մեծաւ մասամբ բազմաեսակ մանր ու մեծ
սայլակներով: Ես չեմ տեսել դաշտից վերադարձող մի չվէյցա-
րացի, որ խոտը, ցախը կամ արմտիքը չալակած տուն բերէր.
նա անպատճառ քաշում է իր յետևից երկանիւ թեթև սայլակ,
որով հնարաւոր է չատ ծանր բևռ տեղափոխել: Սայլակ ունի
փոքրիկ երեխան, աղջիկները, սայլակներ ունին կանայք, հասա-
կաւորները, և ամենքը քաշում, կրում են մրջիւնների պէս՝ առանց
երբեք իրանց մէջքին փոքրիկ ծանրոց դնելու: Միակ բանը,
որ նրանք երբեմն չանձն են առնում մէջքի վրայ կրել, մի
փոքրիկ թեթև կողով է, որ իրանք hotte են անուանում, և ո-
րով սովորաբար հայադործի աշակերտները հայ են բաժանում:
Դեռ չատ անգամ այն էլ չալակելիս նստում են հնձանի վրայ
և սլանում:

Դէ, այժմ մտաբերիր, սիրելիս, այն զարհուրելի բեռները, յորենով, ալիւրով լի ջուալները, որ մեր գիւղացիք չալակում են, և քանի վուխթ: Յիշիր հեռու գաչտերից բերած չալակները, այդ անքացող, հետցող կրծքերը, այդ ճղուած, արիւնով ուռած պարանոցները, կարմրած, դուրս ճգուած աչքերը, գոզդոզացող ոտները, կռացած, ճռռացող մէջքերը:

Ծանր բեռների տակ գալարուած, ծռմռուած, տրորուած այդ մարմինները մեր խաւար ժողովրդի կեանքի իսկական պատկերն են:

Բեռ, բեռ, երբ կը թեթեւանայ մի վոքր:

Յ'գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ